նը։ Թէեւ դաշտային գօտին իր ներկայ սահմանափակ վիճակում իսկ կազմում է արդի Հայաստանի տնտեսական կարողութեան գլխաւոր յենարանը, նրա շտեմարանը, բայց եւ այնպէս խիստ համեստ է նրա բացարձակ նշանակութիւնը անգամ Հայաստանի ներկայ սահմաններում, քանի որ իր տարածութեամբ հազիւ նրա ամբողջութեան 1/5 է կազմում։

Երբ մենք խօսում ենք Հայաստանի հողային ֆոնդի մասին, որ ինքնին գերազոյն աղդակն է նրա պետական եւ ազգային բարգաւաճման, մոռնալու չենք մի յոյժ կարեւոր պարագայ եւս։

Այն է՝ Հայաստան տէր չէ մինչեւ իսկ այն փոքրի՛կ տարածութեան (30,000 քառ. քմ.), որ մարդիկ եւ պատմութիւնը այսօր բաժին են թողել նրան։ Խնդիրը մեր երկրի արօտավայրերի մասին է։

Ճիշդ է, աշխարհագրօրէն եւ վարչականօրէն նրանք մտնում են Հայաստանի սահմանների մէջ, բայց փաստօրէն նրանց վրայ առնուաղն նոյն չափով տարածւում է մեր հարեւանների — վրացիների ու մանաւանդ ադրբէջանցիների — տնտեսական տիրապետութիւնը, որչափ Հայաստանի՛ ժողովուրդինը։ Անցած ամառ, օրինակ, Հայաստանի արօտավայրերում արածուել են, համաձայն խորհրդային պաշտօնական վիճակագրութեան, դրեթէ նոյնչափ (1½ միլ.) խաշներ Վրաստանից ու Ադրբէջանից եկած, որչափ (1·8 միլ.) Հայաստանից։

Սոսկ տնտեսականով չեն սահմանափակւում մեր հարեւանների նկրտումները Հայաստանի արօտավայրերի վրայ։ Նրանք աշկարայ ջանքեր են թափում՝ դրա վրայ կառուցելու իրաւակա՛ն, անգամ քաղաքակա՛ն չէնք։ Երբ ուրեմն խօսք է լինում Հայաստանի հողայի՛ն կարողութեան մասին, անտես անելու չէ երբեք այս պարագան։

Այս եւ ուրիշ տեսակէտներից էլ ջանալու է՝ վերջ տալ ամէն տեսակէտից ժամանակավրէպ դարձած վաչկատուն խաշնարածութեանը մեր հարեւանների մօտ, եւ մանաւանդ թաթարների մօտ, որ շատ ուրիշ դժբախտութիւնների հետ միասին կոչուած է մեր երկրի առանց այն էլ խիստ սահմանափակ հողային ֆոնդը թէկուզ մէկ մասով փաստօրէն խլելու իր բնիկ, սակաւահող ժողովուրդի ձեռից։

Այսպէս կամ այնպէս, իրականութիւնը մնում է տակաւին անփոփոխ։ Եւ դեռ երբեմնապէս խօսք է լինում այն մասին, թէ Սեւանայ լիճն եւս, որ բաղդատաբար աննշան տարածութիւն չէ գրաւում արդի Հայաստանի սահմանների մէջ, նոյն կամ նման վիճակի կարող է արժանանալ, ինչ որ մեր լեռնաշխարհի արօտավայրերը։

Այսչափը Հայաստանի հողային, տարածական իրականութեան մասին։ Այժմ անցնինք բնակչութեան քանակին։

III

Պէտք է ասել, որ խորհրդային-վարչական վիճակագրութիւնները շատ էլ վստահելի չեն գիտական տեսակէտից։ Այդպէս են եղել նաեւ Կովկասի փոխարքայութեան՝ վարչական կարգով կազմած ու հրատարակած՝ վիճակագրութիւնները։

Այդ տեսակէտից բացառութիւն էր կազմում ցարական Ռուսիոյ միակ — առաջին եւ վերջին — վիճակագրութիւնը, որ գիտական հողի վրայ կատարուեց 1897 թուականին եւ սակայն որի ամփոփումները եւ վախճանական եզրակացութիւնները հրատարակութեան տրուեցին շատ ուշ, տարիներ յետոյ միայն։

Խորհրդային Միութիւնը եւս 1926 թուականի վերջին կազմակերպեց նման վիճակագրութիւն։ Թէեւ դրա ամփոփումները ըստ հանրապետութիւնների եւ երկրամասերի արդէ՛ն իսկ հրապարակուած են, բայց դեռ եւս անյայտ են մնում նոյն այդ վիճակագրութեան արդիւնքները՝ ցեղային, լեզուային, կարճ՝ ազգային կազմերի տեսակէտից։

Ուրիշ խօսքով՝ մենք գիտենք արդէն, թէ համաձայն խորհրդային վերջին վիճակագրութեան, Ռուսաստանը եւ նրա բաղկացուցիչ մասերը, դրանց թւում նաեւ Անդրկովկասը ամբողջութեամբ ու նրա բաղադրիչ մասերը՝ Վրաստան, Ադրբէջան եւ Հայաստան առանձին առանձին վերցրած ո՛րչափ բնակչութիւն ունին։ եւ սակայն ճշդրտօրէն չգիտենք, թէ օրինակ Հայաստանի բնակչութիւնից ո՛րքանն է հայ, որքանը՝ ուրիշ ազգեր։ Նոյնը նաեւ Անդրկովկասի միւս մասերի, ինչպէս նաեւ Խոր-